600.0034.17.07.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 հուլիսի 2001 թվականի №34
ք. Երևան

«Անի» բաց բաժնետիրական ընկերությանը «Ջրաձոր» փոքր ՀԷԿ-ի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ե), զ), 17-րդ հոդվածի բ) կետերը, 23-րդ հոդվածը և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի №39 որոշմամբ սահմանված կարգը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Անի» բաց բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել ՀՀ Շիրակի մարզի Ջրաձոր համայնքի տարածքում՝ Ախուրյանի աջափնյա ոռոգման ջրատարի վրա, «Ջրաձոր» փոքր ՀԷԿ-ի կառուցման լիցենզիա՝ մեկ տարի գործողության ժամկետով:
2. «Անի» բաց բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ լիցենզիան սահմանված կարգով կգրանցվի և ուժի մեջ կմտնի ֆինանսական երաշխիքը և տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացնելուց հետո:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**